# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1109-Ա

### 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 20-ի թիվ 286-Ա որոշման թիվ 1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մարմինների՝ 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 25-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել անվճար վահանակներ՝ համաձայն հավելվածի:

2.Առանձնացված վահանակների վրա յուրաքանչյուր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար յուրաքանչյուր տեղում հատկացվում է մեկ A4 չափի 21սմ լայնությամբ և 29.7սմ բարձրությամբ տարածք, հորիզոնական դասավորվածությամբ՝ ընդհանուր 0.06237 քմ. մակերեսով՝համաձայն կից գծագրի:

3.Սույն որոշման օրինակը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, եռօրյա ժամկետում ենթակա է ներկայացման Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 04
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի
ԹԻՎ 1109-Ա ՈՐՈՇՄԱՆ

**ՑԱՆԿ**
**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ**

| Հ/Հ | Մարզ | Համայնք | Բնակավայր | Հասցե | քմ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արմավիր | Արմավիր | Արմավիր | Հանրապետության փողոց | մինչև 4 քմ |
| 2 | Արմավիր | Արմավիր | Արմավիր | Հանրապետության փողոց | մինչև 4 քմ |
| 3 | Արմավիր | Արմավիր | Արմավիր | Շահումյան փողոց | մինչև 4 քմ |
| 4 | Արմավիր | Արմավիր | Արմավիր | Երևանյան փողոց | մինչև 4 քմ |
| 5 | Արմավիր | Արմավիր | Արմավիր | Բաղրամյան փողոց | մինչև 4 քմ |
| 6 | Արմավիր | Արմավիր | Արմավիր | Աբովյան փողոց | մինչև 4 քմ |
| 7 | Արմավիր | Արմավիր | Նորավան | 5-րդ փողոց | մինչև 4 քմ |
| 8 | Արմավիր | Արմավիր | Մայիսյան | 1-ին փողոց | մինչև 4 քմ |
| 9 | Արմավիր | Արմավիր | Մյասնիկյան | Երևանյան փողոց | մինչև 4 քմ |
| 10 | Արմավիր | Արմավիր | Խանջյան | 1-ին փողոց | մինչև 4 քմ |
| 11 | Արմավիր | Արմավիր | Լուկաշին | Թամանյան փողոց | մինչև 4 քմ |
| 12 | Արմավիր | Արմավիր | Հացիկ | Թիվ 6 և թիվ 16 փողոցների խաչմերուկ | մինչև 4 քմ |
| 13 | Արմավիր | Արմավիր | Սարդարապատ | Աբովյան փողոց | մինչև 4 քմ |
| 14 | Արմավիր | Արմավիր | Այգեվան | 5-րդ փողոց | մինչև 4 քմ |
| 15 | Արմավիր | Արմավիր | Լենուղի | 3-րդ փողոց | մինչև 4 քմ |
| 16 | Արմավիր | Արմավիր | Արաքս | Ա. Սիմոնյան փողոց | մինչև 4 քմ |